Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի
որակավորման հանձնաժողովի
«08»12. 2017թ. թիվ 8որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննիչների (այսուհետ՝ քննիչներ) 2018թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը քրեական իրավունքի, քրեական դատավարության, քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրորոշումների, դատական փորձաքննությունների, մինչդատական կալանքի և քննության հարակից հիմնախնդիրների, ապացույցների թույլատրելիության, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի, քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանության, հանցագործությունների առանձին տեսակների քննության առանձնահատկությունների, առանձին քննչական գործողությունների տակտիկայի և մեթոդիկայի ու այլ ոլորտներում:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով: Վերապատրաստման ժամաքանակը ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների[1] համար սահմանվում է 24 ակադեմիական ժամ, այլ քննիչների համար՝ 30 ակադեմիական ժամ: Ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների վերապատրաստումն իրականացվում է 3 աշխատանքային օրերի ընթացքում: Մյուս քննիչների վերապատրաստումն իրականացվում է 4 աշխատանքային օրերի ընթացքում:

5. Վերապատրաստումն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

6. Վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2018 թվականի ապրիլ-նոյեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-Q-040-18	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	8

[1] ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի, զինվորական քննչական գլխավոր վարչության, Երևան քաղաքի քննչական վարչության, մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումների վարչությունների և բաժինների պետեր:

2.	I-Q-041-18	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	8
3.	I-Q-042-18	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	8
4.	I-Q-047-18	Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում	8
5.	I-Q-048-18	Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը	8
6.	I-Q-049-18	Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը	8
7.	I-Q-050-18	Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները	8
8.	I-Q-051-18	Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը	8
9.	I-G-006-18	Ժամանակի կառավարում	8
10.	I-G-001-18	Հաղորդակցության և և բանակցության հմտություններ	8

2. ՀՀ քննչական կոմիտեի այլ քննիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
11.	I-J-009-18	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	6
12.	I-Q-028-18	Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները	6
13.	I-Q-030-18	Կիբեռհանցագործությունների քննության առանձնահատկությունները	4
14.	I-Q-042-18.	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	6
15.	I-Q-047-18	Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում	6
16.	I-Q-048-18	Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննություն	6
17.	I-Q-049-18	Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննություն	6
18.	I-Q-050-18	Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները	6
19.	I-Q-051-18	Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը	6
20.	I-Q-061-18	Հանցագործության փուլերի որակման հիմնահարցեր	4
21.	I-Q-062-18	Քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ վարույթն ավարտելու հիմնախնդիրներ	4
22.	I-Q-063-18	Քննչական ենթակայության հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում	4
23.	I-Q-064-18	Քրեագիտական վարկած և քննության պլանավորում	4

24.	I-Q-065-18	Դեպքի վայրի զննության տակտիկա	4
25.	I-Q-066-18	Հարցաքննության տակտիկական մեթոդներն ու առանձնահատկությունները	4
26.	I-Q-067-18	Սպանությունների քննության առանձնահատկությունները	4
27.	I-Q-068-18	Բնակարանային գողության քննության մեթոդիկա	4
28.	I-Q-069-18	Թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր ձեռք բերելու, պահելու, իրացնելու քննության առանձնահատկությունները	4

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. I-Q-040-18. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և ընթացիկ բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- հանցագործության փուլերի որակման հիմնահարցերը,
- քրեաիրավական ինստիտուտների, այդ թվում՝ պատժողական քաղաքականության զարգացման միտումները և հեռանկարները, քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու դրանց կիրառման առանձնահատկությունները,
- հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների, սեռական ազատության և անձեռնմխելիության, այդ թվում՝ ընտանիքի և երեխայի շահերի ուղղված հանցագործությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, սեփականաթության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործությունների, բանկային հարաբերություններում խարդախության ու այլ անձին գույքային վնաս պատճառելու քրեաիրավական բնութագրի և այլն) և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները և դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության ու Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի դրույթները),
- քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները:

Դասընթացը նախատեսված է քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող բոլոր քննիչների համար:

2. I-Q-041-18. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման կարգի պահպանման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործով վարույթը կարճելու հիմքերը, առանձնահատկությունները և որոշումների բողոքարկումը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քրեական գործերով իրավական օգնությունը միջազգային պայմանագրերին համապատասխան կամ վերջիններիս բացակայության դեպքում,
- քննչական և դատավարական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը և նախաքննության ընթացքում քննիչների կողմից թույլ տրվող խախտումները,
- առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և կրիմինալիստիկական առանձնահատկությունները,
- պաշտպանին բացարկ հայտնելու հիմքերը,
- նախաքննության ընթացքում կայացվող որոշումների և քննչական գործողությունների արձանագրությունների կազմման առանձնահատկությունները,
- պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը և այլն,
- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը:

Դասընթացը նախատեսված է քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող բոլոր քննիչների համար:

3. I-Q-042-18. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:

Դասընթացը մասնավորապես ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և քննչական պրակտիկայում դրանց կիրառման հմտությունները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

4. I-Q-047-18. Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում

Դասընթացն անհրաժեշտ է ապացույցների թույլատրելիության վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի և ներպետական դատական պրակտիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ապացույցների հասկացության և թույլատրելիության բովանդակության, այդ թվում՝ ապացույցների թույլատրելության, ներպետական և եվրոպական չափանիշների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ դիրքորոշումները,
- օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների օգագործման մի շարք հարցերի վերաբերյալ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները,
- «Հանցագործության սադրանքի» հասկացության և բովանդակության վերաբերյալ՝ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

5. I-Q-048-18. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննության վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին և ներպետական դատական պրակտիկային ծանոթացնելու և համապատասխան չափորոշիչների կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- կյանքի իրավունքի, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի, ինչպես նաև դրանք պահպանելու ուղղությամբ պետության պոզիտիվ պարտավորության բովանդակության բացահայտումը,
- նշված բնույթի գործերով քննության առանձնահատկությունները՝ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված չափանիշների լույսի ներքո:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

6. I-Q-049-18. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է խոցելի տուժողների, վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննության առանձնահատկությունների և այդ հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- խոցելի խմբերի վերհանման չափանիշները,
- խոցելի անձանց մասնակցությամբ իրականացվող քննության առանձնահատկությունները,
- խոցելի անձանց նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

7. I-Q-050-18. Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները

Դասընթացն անհրաժեշտ է մինչդատական վարույթում կասկածյալի և մեղադրյալի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՄԻԵԿ 5-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը,
- անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմքերը,

- անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման դեպքում կասկածյալի, մեղադրյալի կամ դատավարության այլ մասնակցի իրավունքների ապահովման եղանակները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

8. I-Q-051-18. Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը

Դասընթացն անհրաժեշտ է քրեական գործերի քննության մեթոդաբանության առանձին հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՄԻԵԿ հիմնարար սկզբունքները, որոնք ազդում են քրեական գործով քննության մեթոդաբանության վրա,
- քննության վարույթի մասնակիցների մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի բովանդակությունը,
- քննության ընթացքում կասկածյալի և մեղադրյալի արդար դատաքննության, անձնական ազատության իրավունքների ապահովման եղանակները և այլն:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

9. I-G-006-18. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում, մասնագետի ժամանակային իրազեկություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, ժամանակաճշտում, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, Էյզենհաուերի սկզբունքը:

Դասընթացը նախատեսված է քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող բոլոր քննիչների համար:

10. I-G-001-18. Հաղորդակցության և բանակցության հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է հաղորդակցությունների և բանակցությունների վերաբերյալ գիտելիքների կատարելագործման համար՝ պաշտոնեական գործառույթների իրականացման ընթացքում կառուցողական փոխհարաբերությունների ձևավորման և հնարավոր ռիսկերի կանխման նպատակով:

Դասընթացի ներառում է հաղորդակցման գործընթացը, կառուցվածքը և կանոնները, հիմնական արգելքները և դրանց հաղթահարման միջոցները, հակամանիպուլյացիոն հնարքները, բանակցությունների հիմնական տեսակները, մոտեցումները, արդյունավետ բանակցային գործընթացի կառուցման եղանակները, արդյունավետ փաստարկների կառուցման կանոնները:

Դասընթացը նախատեսված է քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող բոլոր քննիչների համար:

11. I-J-009-18. Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները

Դասընթացը պայմանավորված է փորձագիտական գործունեության և փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փարձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները, փորձագիտական գործունեությունը և դրա առանձնահատկությունները, քրեական վարույթում փորձաքննությունների (դատական հետքաբանություն, պայթյունատեխնիկական, դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական, նյութագիտական, դատաձեռագրաբանական, դատաձգաբանական, դատահամակարգչա-տեխնիկական և այլ) ժամանակակից հնարավորությունները, դրանց նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

12. I-Q-028-18.Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները

Դասընթացն անհրաժեշտ է զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի համաձայն, զինվորական կարգապահության խախտումների և զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից, զինվորական հանցագործությունների ընդհանուր և որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

13. I-Q-030-18. Կիբեռհանցագործությունների քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, դրանց քննության մեթոդաբանության առանձին հարցերի կապակցությամբ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է <<Կիբեռհանցագործությունների մասին>> ԵԽ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, Կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեի (T-CY)՝ արարքների որակման հետ կապված բանաձևերը, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների որակման հիմնախնդիրները, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները, մանկական պոռնոգրական նյութերի հետ կապված քրեական գործերով ապացույցների ձեռքբերման հնարավոր տարբերակները,<<տոր>> կամ <<մութ>> ցանցերից ապացույցներ ձեռքբերելու

դժվարությունները, նման հանցագործությունների լատենտայնությունը, կիբերհանցագործություններով միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

14. I-Q-042-18. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 3-րդ կետի ներքո:

15. I-Q-047-18. Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 4-րդ կետի ներքո:

16. I-Q-048-18. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 5-րդ կետի ներքո:

17. I-Q-049-18. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 6-րդ կետի ներքո:

18. I-Q-050-18. Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 7-րդ կետի ներքո:

19. I-Q-051-18. Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 8-րդ կետի ներքո:

20. I-Q-061-18. Հանցագործության փուլերի որակման հիմնահարցերը

Դասընթացը պայմանավորված է հանցագործության զարգացման փուլերի՝ նախապատրաստության, հանցափորձի և ավարտված հանցագործության փուլերում արարքի ճիշտ որակման, պատասխանատվության անհատականացման հարցերում առկա խնդիրների լուսաբանման, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հանցագործության նախապատրաստության, հանցափորձի և ավարտված հանցագործության որակման հետ կապված հարցերը, հանցագործությունից կամովին հրաժարվելու գործնական հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

21.I-Q-062-18. Քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ վարույթն ավարտելու հիմնախնդիրները

Դասընթացն անհրաժեշտ է քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդումը դադարեցնելու գործընթացում հանդիպող վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում առկա լուծումները մատուցելու, դրանք գործնականում

կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման կարգի պահպանման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է գործով վարույթի կարճման և քրեական հետապնդումը դադարեցնելու կարգը ՀՀ քրեական դատավարության գործող և նոր օրենսդրության համատեքստում, պրակտիկայում հրանդիպող խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, ՀՀ վճռաբեկ ֆատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

22. I-Q-063-18. Քննչական ենթակայության հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է քննչական ենթակայության կանոններում առկա վիճահարույց հարցերի, գործն ըստ քննչական ենթակայության ուղարկելու գործընթացում հանդիպող խնդիրների շուրջ գիտելիքներ կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է նախաքննություն իրականացնող տարբեր կառույցների կողմից ըստ քննչական ենթակայության կանոնների նախաքննության կատարումը, գործնականում հանդիպող խնդիրները, դատախազի մասնակցությունը քննչական ենթակայության որոշման հարցում:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

23. I-Q-064-18. Քրեագիտական վարկած և քննության պլանավորում

Դասընթացը պայմանավորված է քրեագիտական վարկածների առաջ քաշման և քննության կազմակերպման մեթոդի, քննության կազմակերպման հիմքի, քննության պլանավորման փուլերի հաջորդականության վերաբերյալ գործնական հմտություններ հաղորդելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեագիտական վարկածի հիման վրա քննության պլանավորման անհատականության, որոշակիության, ճկունության և իրատեսականության սկզբունքների հիման վրա քննության պլանավորման վերաբերյալ գործնական հմտություններ, քննության պլանավորումը միանձնյա քննիչի և քննչական խմբի գործողությունների համատեքստում, քննության պլանավորման աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ քննչական կոմիտեի հաստատած ուղեցույցի ուսումնասիրում (քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. հրաման):

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

24. I-Q-065-18. Դեպքի վայրի զննության տակտիկա

Դասընթացը պայմանավորված է դեպքի վայրի զննության տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դեպքի վարի զննության տակտիկկան առանձնահատկություններն ու մեթոդները, դեպքի վայրի զննությամբ ձեռք բերված ապացույցների ամրագրման տեխնիկա-քրեագիտական մեթոդները և ձևերը, ինչպես նաև դեպքի վայրի զննության տակտիկային վերաբերող այլ հարցեր:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

25. I-Q-066-18. Հարցաքննության տակտիկական մեթոդներն ու առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության առանձին սուբյեկտների՝ կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի, անչափահասի հարցաքննության տակտիկական հնարքների և մեթոդների վերաբերյալ նոր հմտություններ մատուցելու, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման կարգի պահպանման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է դատավարության առանձին մասնակիցների հարցաքննության առանձնահատկությունները, տակտիկական հնարքներն ու մեթոդները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

26. I-Q-067-18.Սպանությունների քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է սպանությունների քննության սկզբնական և հետագա փուլերում կատարվող գործողությունների, պատվիրված սպանությունների քննության կազմակերպման և դրանց բացահայտման գործընթացում իրավակիրառ պրակտիկայում հանդիպող վիճահարույց հարցերի շուրջ պարզաբանումների, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քննության սկզբնական փուլի առանձնահատկությունները, դիակ կամ առանձին օրգաններ հայտնաբերելիս կատարվող հիմնական գործողությունները, սպանությունների քննության առանձնահատկությունները դիակի բացակայության պայմաններում,պատվիրված սպանությունների մեխանիզմի առանձնահատկությունները, ինչպես նաև սպանությունների քննության առանձնահատկություններին վերաբերող այլ հարցեր:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

27. I-Q-068-18.Բնակարանային գողության քննության մեթոդիկա

Դասընթացը պայմանավորված է բնակարանային գողությունների քննության կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է բնակարանային գողությունների քննության ընդհանուր մեթոդաբանությունը, պարզաբանման ենթակա հանգամանքները, քննության սկզբնական և հետագա փուլերի առանձնահատկությունները, տվյալ հանցագործության մեխանիզմի հասկացությունը, քրեագիտական դիագնոստիկան, ինչպես նաև հանցագործության տվյալ տեսակի քննության մեթոդիկային վերաբերող այլ հարցեր:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների:

I-Q-069-18.Թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր ձեռք բերելու, պահելու, իրացնելու քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ քրեական գործերով քննության ընթացքում առկա խնդիրների, քննության սկզբնական և հետագա փուլերում կատարվող գործողությունների գործընթացում իրավակիրառ պրակտիկայում հանդիպող վիճահարույց հարցերի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քննության սկզբնական և հետագա փուլերում կատարվող գործողությունների առանձնահատկությունները, թմրանյութ կամ թմրանյութի իմիտացիա ստեղծող նյութերի <<Հսկիչ գնում>> իրականացնելիս կատարվող հիմնական գործողությունները, ինչպես նաև հանցագործությունների տվյալ տեսակի քննությանը վերաբերող այլ հարցեր

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների: